Կենդանի կենդանիների տարանցիկ փոխադրում

Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով

Կենդանի կենդանիների (միայն խոշոր եղջերավոր և հորթ) տարանցիկ փոխադրումը Իրանի տարածքով այսուհետ թույլատրվում է հետևյալ պայմաններով՝

1. Կենդանիները պետք է կարանտինացվեն իրավասու մարմնի հսկողության ներքո և ծագման երկրում 21 օր առաջ:
2. Կենդանիները պետք է ծնված լինեն ծագման երկրում:
3. Կենդանիները պետք է կրեն շտրիխ կոդերով զույգ ականջապիտակներ, որոնց համարները պետք է լինեն անասնաբուժական առողջության ուղեկցվող վկայականում:
4. Անասնաբուժական առողջության վկայականը ծագման երկրի իրավասու մարմնի կողմից պետք է տրվի յուրաքանչյուր խմբաքանակի համար՝ ըստ կցված նմուշի, որը պատրաստված է Իրանի ներմուծման առողջապահական պահանջներին համապատասխան (ըստ կցվածի նմուշի):
5. Կենդանիների տարանցման համար պետք է օգտագործվեն համապատասխան տրանսպորտային միջոցներ, որոնցում յուրաքանչյուր կենդանու պետք է հատկացվի առնվազն 1,5 մ^2 տարածք (այդ նպատակով բեռնարկղերի կամ բեռնատարների օգտագործումն արգելվում է):
6. Կենդանիները պետք է անցնեն Իրանի տարածքով՝ առանց կանգառի կամ բեռնաթափման իրավունքի:
7. Բեռնափոխադրումների փաստաթղթերում որևէ անհամապատասխանություն կամ կենդանիների հիվանդության որևէ ախտանիշ հայտնաբերելու դեպքում բեռների մուտքն Իրանի տարածք արգելվում է:
8. Ծագման երկրում Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության ծանուցման ենթակա հիվանդությունների բռնկման դեպքում ծագման

երկիրը կենդանիների առաքումը Իրանի տարածքով տարանցիկ փոխադրման համար դադարեցնում է:

9. Իրանի անասնաբուժական կազմակերպությունն իրեն իրավունք է վերապահում կանխել կենդանիների տարանցիկ փոխադրումը առողջության հետ կապված անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում: